յանեղանելին ելանել՝[1] խաւսել դրուատ սակս Հոմազնոյն՝ ո մարդ Աստուծոյ:

Բայց թէ տացես ի սատար զիղձս քոյ լինել մակոյկ մտաց իմոց, և խլել ի տղմոյ[ա] տխրութեան կենցաղոյս, թևակոխել թեթեւաքայլ ի խորս իմաստից, վերաբերել ակունս պատուականս և մարգարիտս գեղեցիկս, ևս և ոսկի սափիրա զի դիցուք ի շամփրակի[*] ներբողելոյս ի մէնջ: Ոչ որպէս թէ կարաւտ է կատարեալն՝ այսմ ընծայի և կամ փառաւորի փառաւորեալն այսու փառաւք. զի զի՞նչ երևի մեր հոծեալ աթրութայս[2] առ գերագոյն հանճարն: Եւ զի կարծի յոմանց յա-

---

ա. Զ. Տղմո:

* Լուսանցքում իբրեւ մեկնութիւն—«պսակի»:

1. Տ. Դաւիթ Անյաղթ. սահմանք իմաստ. էջ 194 (տպագ. Վենետ. 1833) «Զորս առակելով քերթութիւնն վասն Ոտոսի եւ Եփիաղտոսի որք զՈսսա զլեառն ի վերայ Ողիմպիոսի յօժարեցան դնել՝ եւ ի վերայ Ոսսայ զՏերեւաշարժն Բիղովն որպէս զի կրկին ճեմարան եղիցի»: Նմանութիւնը ակներեւ է եւ հետաքրքիր նրանով, որ առաջ է բերուած փոփոխութիւններով այն էլ անուանց մէջ. ճարտասանական յատուկ սովորած պատկեր է, որ կարող են երկու հեղինակները միմեանցից անկախ, ընդհանուր աղբիւրից առած լինել: Նոյնը կայ եւ Գրիգոր Մագիստրոսի թղ. ԻԵ. Տես Ն. Հայկ. Բառ. «Տերեւաշարժ»:

2. Այս բառը գործ են ածում Խոր. եւ Ղազ. Փարպ. Մեսրոպի մասին, բայց գրում են. «աթութայս»: